



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(1-ին կիսամյակ)

Վայոց ձորի մարզը բնութագրող հիմնական ցուցանիշները:

Մարզը զբաղեցունում է 2308 քառ. կմ տարածք, որը կազմում է հանրապետության տարածքի 7.8 տոկոսը: Բնակչության թիվը կազմում է 50800 մարդ, որից գյուղական բնակչությունը 41 համայնքներում կազմում է 33.1 հազ. մարդ, իսկ քաղաքային բնակչությունը՝ երեք քաղաքներում կազմում է 17.7 հազ. մարդ, որը 2001 թվականի համեմատությամբ նվազել է 5200 մարդով: Մարզի համայնքները գտնվում են նախալեռնային և լեռնային գոտիներում: Սահմանամերձ են հինգ համայնքներ:

Մարզի տնտեսության զարգացման հիմնական ուղղությունը գյուղատնտեսությունն է, որտեղից միջին հաշվով տարեկան արտադրվում է 21.8 միլիարդ դրամի համախառն արտադրանք: Մեկ շնչի հաշվով արտադրվում է 429 հազար դրամի արտադրանք: Ընթացիկ տարում գյուղատնտեսության համախառն արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ փոքր ինչ պակաս կլինի կապված ձմռան ամիսներին խաղողի ու պտղատու այգիների ցրտահարության, ինչպես նաև շարունակվող երաշտի պատճառով:

Վերջին տարիներին խաղողի ու պտղատու այգիների տարածություններն ավելացել են 248 հեկտարով, որից 31.5 հեկտարի վրա ոռոգումն իրականացվում է կաթիլային եղանակով: Ցածրադիր գոտիներում կան հնարավորություններ ավելացնելու խաղողի, իսկ միջին գոտիներում պտղատու այգիների տարածությունները մինչև 150-200 հա-ի սահմաններում: „Հայկական միրգ, ծրագրով մարզի չորս /Արին, Խնձորուտ, Ազատեկ, Վերնաշեն/ համայնքներում հիմնվել է 47.2 հա պտղատու այգիներ՝ խնձորենի, կեռասենի, դեղձենի, ընկույզենի տեսակներով: Ծրագիրն ինչ-ինչ պատճառներով ընդհատվեց, և այժմ աշխատանքներ են տարվում նշված համայնքներում կոռպերատիվների ստեղծման ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա բարելավել այգիների մշակությունը, անցկացնել ոռոգման կաթիլային համակարգ:

Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 6566 հա, որից՝ վարելահող 2762 հա, որը կազմում է ընդհանուր վարելահողերի միայն 17 տոկոսը: Մինչդեռ մարզի տարածքում տարեկան մթնոլորտային տեղումները չեն անցնում 400-450մմ-ից: Այդ է հիմնական պատճառը, որ անջրդի վարելահողերի մի զգալի մասը շուրջ 10000 հա դուրս են մնում ցանքաշրջանառությունից:

Ընթացիկ տարում մարզում կատարվել է 5172 հա գյուղատնտեսական մշակաբույսերի ցանք:

Եղեգիս-Ելփին, Կեչուտ-Ազատեկ-Փոռ ինքնահոս ջրագծերի կառուցումով փաստորեն մարզն ամբողջությամբ անցել է ինքնահոս ոռոգման, բացի Խաչիկ և Ելփին գյուղերից, որտեղ ոռոգման ջուր է տրվում երկաստիճան ջրհանկայանի միջոցով: Ոռոգելի հողատարածքների ավելացման միակ հնարավորությունը փոքր ջրմբարների կառուցումն է /Ելփին, Խաչիկ, Վերնաշեն/:

Ոռոգման ներքին ցանցերից ջրի կորուստները նվազագույնի հասցնելու նպատակով, վերջին տարիներին գյուղական տարածքների տնտեսական զարգացման գրասենյակի միջոցով կառուցվել է 23 կմ ոռոգման ներքին ցանց, ծախսվել է 720 մլն. դրամ: Այս ուղղությամբ անելիքներ դեռևս շատ են քանի, որ ոռոգման ներքին ցանցերը կառուցվել են 35-40 տարի առաջ, մեծ մասը ֆիզիկապես մաշվել են: Մարզի տարածքում գործում են 7 հակակարկտային կայաններ, որն անբավարար է եղած ցանքատարածությունները կարկուտից պաշտպանելու համար: Անհրաժեշտ է ևս 20 կայանների տեղադրում:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքի 60-65 տոկոսը ստացվում է անասնապահությունից: 2017թվականի հունվարի 1-ի տվյալներով մարզում առկա է 19755 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, որից կովեր՝ 8419 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 16808 գլուխ: Տարեկան արտադրվում է շուրջ 20000 տոննա կաթ, 6300 տոննա միս և այլ մթերքներ: Մարզի տարածքում գործում են կաթի վերամշակման 5, խաղողի վերամշակման 10, պտուղ-բանջարեղենի վերամշակման 1 ձեռնարկություններ: 35 մլն. դրամ մասնավոր ներդրումների արդյունքում նախատեսված կարողություններով շահագործման է հանձնվել Զառիթափի սպանդանոցը, ստեղծելով 30 աշխատատեղ: Մարզի գյուղատնտեսության հետագա զարգացումը տեսնում ենք կոոպերատիվների ստեղծման, ֆերմային տնտեսությունների զարգացման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման մեջ՝ մասնավորապես անցում կատարել ինտենսիվ այգիների հիմնան, որտեղ ոռոգում կկատարվի կաթիլային եղանակով:

Մարզում գործում են 146 ֆերմերային տնտեսություններ՝ որից 87 փոքր ֆերմերային տնտեսություններ՝ 45 անասնապահության, 42 այգեգործության: Նշված ֆերմերային տնտեսություններն ունեն 1162 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ և 460 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Մշակում են 25 հա պտղատու և 18 հա խաղողի այգիներ:

Գործում են 24 միջին ֆերմերային տնտեսություններ, որից 17-ը անասնապահություն, 7-ը այգեգործություն: Ֆերմերային տնտեսություններն ունեն 390 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, 1592 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Մշակում են 7.4 հա խաղողի այգի: 35 խոշոր ֆերմերային տնտեսություններ, որից՝ 17 անասնապահություն, 18 այգեգործություն: Ֆերմերային տնտեսություններում առկա է 1157 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ և 3362 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: Մշակում են 12 հա պտղատու և 6 հա խաղողի այգիներ:

Նպատակահարմար ենք համարում ֆերմերային տնտեսություններին հնարավորություն տալ օգտվելու պետական աջակցության ծրագրերից /սերմ, պարարտանյութ, դիզ. վառելիք/:

Գյուղատնտեսական արտադրությունը խթանելու նպատակով, կազմվել ու ՀՀ տարածքային կառավարման ու զարգացման նախարարություն է ներկայացվել այժաբուծության զարգացման, ջերմոցային տնտեսությունների ստեղծման, թռչնաբուծության զարգացման,

չրերի արտադրություն կազմակերպելու, վայրաճ կուլտուրաների, պտղատու այգիների և ջրովի վարելահողերի օրգանիկ սերտիֆիկացում, օրգանիկ պահածոների արտադրություն կազմակերպելու ներդրումային ծրագրեր:

Ընդհանուր առմամբ կազմվել ու տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 23 ներդրումային ծրագրեր 2 միլիարդ 384 մլն դրամ գումարով, որոնցից 8-ը 1 միլիարդ 616 մլն. դրամ գումարով հավանության է արժանացել կառավարության կողմից, դրանցից երկուսը՝ չրերի արտադրության և այծի կաթից պանրի արտադրության ծրագրերն 120 միլ. դրամով արդեն ֆինանսավորվել են:

2017թվականի առաջին կիսամյակում բանկերի ողմից 393 գյուղացիական տնտեսություններին տրվել է 375 մլն. դրամ սուբսիդավորված վարկ:

Կազմվել է մարզի զարգացման 2017-2025թթ ռազմավարությունը, որտեղ նշվել են զարգացման գերակա ուղղությունները՝ գյուղատնտեսություն, զբոսաշրջություն, արդյունաբերության արդիականացում:

Մարզի բոլոր համայնքներն ունեն հնգամյա զարգացման ծրագրեր:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունները տարեկան թողարկում են 16.1 միլիարդ դրամի համախառն արտադրանք, գերակշռողը մշակող արտադրությունն է /հանքային ջրերի և խմիչքների արտադրություն/: Մեկ շնչի հաշվով արտադրվում է 318 հազ.դրամի արդյունաբերական արտադրանք:

Ընթացիկ տարվա վեց ամիսներին թողարկվել է 8.0 միլիարդ դրամի համախառն արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմում է 3 տոկոս:

2016 թվականին ընդհանուր առմամբ մարզի բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվել է 1մլն 138 հազ. դրամի համախառն արտադրանք: Մարզի համախառն արտադրանքը կազմում է հանրապետության համախառն արտադրանքի 1.2 տոկոսը: Ծառայությունների ծավալը կազմում է 6.8 միլիարդ դրամ, կամ մեկ շնչի հաշվով 134 հազ. դրամ: Եկամտահարկի ծավալը կազմում է 1 միլիարդ 764 միլ. դրամ, մեկ շնչի հաշվով 35 հազ. դրամ, որը կազմում է հանրապետականի 0.72 տոկոսը:

Վերջին տարիներին մարզում ի հայտ են գալիս զարգացման նոր ոլորտներ, ինչպիսիք են հանքարդյունաբերությունն ու էներգետիկան: Բնակչության զբաղվածության խնդիրների լուծման գործում կարևոր նշանակություն ունի „ Ամուլսարի,, ոսկու հանքավայրի շահագործումը: Նշված հանքավայրի շահագործման համար 2017-2018թթ կներդրվի 370 մլն ԱՄՆ դոլար, կստեղծվի 1300 աշխատատեղ: Այժմ հանքավայրում աշխատում են 730 մարդ, որոնցից 350-ը մարզից են: Ընկերությունը պատրաստակամ է համայնքներում իրականացնել սոցիալական մի շարք ծրագրեր:

Մարզում գործում են 32 ՀԵԿ, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 69 ՄԳՎՏ: Տարեկան արտադրվում է 192 միլ կ/ժամ էլեկտրաէներգիա: ՀԵԿ-ում աշխատում են 420 մարդ:

Զբոսաշրջությունը մարզի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից է, և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզի տարածքում հաշվառված են ավելի քան 1300 պատմամշակութային հուշարձաններ: Բազմաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական ու կենդանական աշխարհի բազմազանությունը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի հանքային ջրերի ճանաչելությունը մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ տարվա չորս եղանակների համար: Զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: 2016թվականի ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է շուրջ 42 հազարի, իսկ այս տարվա վեց միսներին այդ թիվը հասնում է 20400-ի, նախորդ տարվա 18300-ի դիմաց: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը:

Մարզում գործում են 17 հյուրանոցներ, 68 հյուրատներ, և 8 առողջարաններ:

Վայոց ձորի մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջվող հրատապ ծրագրերի շրջանակում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 2017թվականին հատկացվել է 320 մլն. դրամ: Այս միջոցներն ուղղվել են մարզի 29 համայնքներում առավել հրատապ խնդիրների լուծմանը, և ներկա պահին իրականացվում են շինարարական աշխատանքներ: Նշված ծրագրերն են՝ նախա-դպրոցական շենքերի, մշակույթի տների, խմելու և ոռոգման ջրագծերի նորոգման աշխատանքները: Այս գործընթացի արդյունքում տնտեսվել է շուրջ 70 մլն. դրամ:

Լուրջ ներդրումներ են նախատեսվում /10 մլն. ԱՄՆ դոլար/ իրականացնել Ջերմուկ քաղաքում: Բարեկարգվելու են ներքաղաքային փողոցները, վերանորոգվելու են բնակելի շենքերի տանիքներն ու բակային տարածքները, բարեկարգվելու է քաղաքային զբոսայգին և այլն: Նշված ծրագրերի նախագծման աշխատանքների համար, պետական բյուջեից հատկացվել է 40 մլն. դրամ:

Ճանապարհաշինության ոլորտում ներդրումները կազմել են 420 մլն. դրամ:

2017թվականի առաջին կիսամյակում համայնքային բյուջեների ֆինանսավորմամբ կատարվել է 98.5 մլն. դրամի շինարարական, վերա-նորոգման աշխատանքներ /փողոցների բարեկարգում, խմելու ջրագծերի վերանորոգում, մանկապարտեզների շենքերի վերանորոգում և այլն/: Բարեգործական կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվել է 130 մլն. դրամի շինարարական աշխատանքներ /փողոցների լուսավորություն, խմելու ջրագծերի կառուցում/: Մասնավոր ներդրողների միջոցներով

Ֆինանսավորումը կազմել է 1603 մլն. դրամ /հյուրանոցների, հանգստյան գոտիներ, ՀԷԿ-ի կառուցում/: Ստեղծվել է շուրջ 195 աշխատատեղ:

Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմամբ աջակցել ՓՄՁ զարգացմանը, ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել արեգակնային էլեկտրակայան 1 մեգավատ հզորության և աջակցել էկոտուրիզմի զարգացմանը մարզի լեռնային գյուղերում:

Նախագծման աշխատանքները կավարտվեն սեպտեմբերին, իսկ շինարարությունը կսկսվի դեկտեմբերին: Ծրագրի ֆինանսավորումը կատարվում է Եվրոմիության կողմից, իսկ համաֆինանսավորողներն են ՀՀ կառավարությունը 18 %, իտալական ծրագրի գործընկերները 10 տոկոս, մնացած 72 տոկոս ֆինանսավորումը կատարում է Եվրոմիությունը: Ծրագրի արժեքը կազմում է 2 միլ. Եվրո, կստեղծվի 45 աշխատատեղ:

„Ամուլսարի,, ոսկու հանքավայրում ներդրումները կազմում են 117 մլն ԱՄՆ դոլար, մինչև տարեվերջ այն կհասցվի 250 միլ. ԱՄՆ դոլարի:

Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում մարզի 12 համայնքների աղբահանության և սնիտարական մաքրման աշխատանքները կատարվում է „Եդեգնաձորի ԲԿՏ,, ԲԲԸ-ի կողմից:

„Մաքուր Հայաստան,, ծրագրի շրջանակներում մայիսի 27-ին կայացած համապետական շաբաթօրյակի ընթացքում մարզում իրականացվել են ծավալուն աշխատանքներ: Այդ ընթացքում արձանագրված 129 աղբավայրերից 112 փակվել են:

Չորս աղբավայրերի /Մալիշկա, Քարագլուխ, Վերնաշեն, Սալլիի/ ամբողջական վերացման համար հաշվարկներ են ներկայացվել գումարային տեսքով: Աշխատանքներ են տարվում գործող 13 աղբավայրերից ևս վեցի փակման ուղղությամբ: Մարզի 29-ը համայնքներից 12-ը աղբահանությունն իրականացնում են „Եդեգնաձորի ԲԿՏ,, ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի հիման վրա, 7 համայնքներում աղբահանությունը իրականացվում է համայնքային ենթակայության կազմակերպությունների միջոցով, իսկ 10 համայնքներում աղբահանությունն իրականացվում է համայնքապե-տարանների միջոցով:

Մարզպետարանի նախաձեռնությամբ հուլիսի 1-ին կազմակերպվել է մարզային շաբաթօրյակ: Համայնքներում իրականացվել են սանիտարական մաքրման, աղբակույտերի և աղբանոցների վերացման, բարեկարգման աշխատանքներ: Կազմակերպչական աշխատանքներ են տարվել հուլիսի 29-ի համապետական շաբաթօրյակը նույնպես կազմակերպված անցկացնելու համար: Այդ օրվա համար մշակվել է գործողությունների ծրագիր: Բոլոր համայնքներում ավագանու որոշումներով սահմանվել են բնակչությունից աղբահանության համար դրույքաչափեր: Մարզի 470 տնտեսվարող սուբյեկտներից աղբահանության համար կնքվել են 398 պայմանագրեր, որը նախորդ տարվանից ավել է 80-ով: Գյուղական բնակավայրերում բնակչության հետ կնքվել է 2916 աղբահանության

պայմանագիր, այդ աշխատանքները շարունակվում են: 2017 թվականի վեց ամիսներին աղբահանության և սանամաքրման ծախսերը կազմել են 61.6 մլն դրամ, որից՝ սանամաքրում 35.5, աղբահանություն 26.1 մլն դրամ, հավաքագրումը կազմել է 22.5 մլն դրամ: Քանր որ գյուղական բնակչության հետ աղբահանության պայմանագրերը կապվել են հունիս ամսից, ուստի մինչև տարեվերջ գանձումները կահսցվի մինչև 48 միլ. դրամի: Մարզի համայնքների անհրաժեշտ աղբամանների պահանջարկը կազմում է 830 հատ:

Մարզում գործում են 50 հանրակրթական ուսումնական հաստոտու-թյուններ, որտեղ սովորում են 6278 աշակերտ, աշխատում են 1062 ուսուցիչներ:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունը կազմում է 1:6-ի, դասարանների միջին խտությունը՝ 12 է: Մեկ աշակերտին հասանելիք ուսումնական մակերեսը կազմում է 16.8 քմ: Ընթացիկ տարվա 225 դիմորդներից ԲՈՒՀ է ընդունվել 157-ը: Միջազգային, հանրապետական օլիմպիադաների 52 մրցանակակիրներից հաղթող են ճանաչվել 11-ը:

Կան դպրոցներ որտեղ ուսուցիչների ու սպասարկող անձնակազմի թիվն ավելին է աշակերտների թվից:

Այժմ աշխատանքներ են տարվում դպրոցների օպտիմալացման ուղղությամբ: Առաջին փուլով առաջարկվել է Եղեգնաձորի և Վայքի քաղաքային վարժարանները վերակազմավորման միջոցով միավորել Եղեգնաձորի և Վայքի ավագ դպրոցներին: Արդյունքում կխնայվի շուրջ 56 մլն. դրամ:

Մարզում գործում է 17 մանկապարտեզ, որոնցում ընդգրկված են 1044 նախադպրոցական տարիքի երեխաներ:

Նախատեսվում է այն համայնքներում որտեղ կան մեկից ավելի մանկապարտեզներ միավորել մեկ ՀՌԱԿ-ի մեջ, արդյունքում կխնայվեն ֆինանսական միջոցներ:

Գործում է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը, որտեղ 3 մասնագիտությունների գծով սովորում են 291 ուսանող:

Եղեգնաձոր քաղաքում գործում է նաև Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջը, որտեղ 12 մասնագիտությունների գծով սովորում են 330 ուսանող:

Կանոնավոր գործում են երաժշտական, արվեստի և գեղարվեստի 6 դպրոցներ: Նրանցում աշխատում են 98 մանկավարժներ, ընդգրկված են 801 երեխաներ: Աշխատում են 3 թանգարանները, Ազգային պատկերասրահի 2 մասնաճյուղերը: Գործում են համայնքային ենթակայության 4 մանկապատանեկան մարզադպրոցները, որոնցում աշխատում են 13 մարզիչներ, ընդգրկված են 375 երեխաներ: Հանրակրթական դպրոցներում ֆիզկուլտուրա առարկան դասավանդում են 66 ուսուցիչներ, որոնք ունեն համապատասխան մասնագիտական կրթություն:

Մարզում գործում են երեք քաղաքային հիվանդանոցներ և գյուղական համայնքներում 5 առողջապահության առաջնային պահպանության կենտրոններ: Նշված բուժօգնականներին ամրագրված են 35 բուժա- մանկաբարձական կետեր: Հիվանդանոցներում ծավալվել է 85 մահճակալ: Առողջապահական հաստատությունների 2017թվականի գլոբալ բյուջեն կազմում է 611.7 միլ. դրամ: Մշակվել է ծրագիր առողջապահական հաստատություններում իրականացնել օպտիմալացում: Մասնավորապես առաջարկվում է վերակազմավորման միջոցով առողջապահության առաջնային պահպանման կենտրոնները միավորել Եղեգնաձորի և Վայքի հիվանդանոցներին: Արդյունքում կտնտեսվի շուրջ 20 մլն. դրամ:

Մարզի տնտեսության տարբեր ոլորտներում աշխատում են շուրջ 23800 մարդ: Գրանցվել են, որպես գործազուրկ 1420 մարդ, կամ գործազրկության մակարդակը կազմում է 10.2 տոկոս: Աղքատության շեմից ցածր տնտեսությունների տեսակարար կշիռն ընդհանուր տնտեսությունների թվի մեջ կազմում է 17.9 տոկոս:

Մարզի համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմում է 1 միլիարդ 795 մլն. դրամ, որից սեփական եկամուտներ՝ 701 մլն. դրամ, սեփական եկամուտները կազմում են ընդհանուր եկամուտների 39 տոկոսը, իսկ մեկ շնչի հաշվով այն կազմում է 13700դրամ: 2017թվականին նախատեսվել է համայնքներին հատկացնել 995 մլն. դրամի չափով դոտացիա:

2017թվականի առաջին կիսամյակում համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարողականը կազմել է 103.7 տոկոս: Նախորդ տարվա նույն ժամանակի համեմատությամբ սեփական եկամուտներն ավելացել են շուրջ 77.0 մլն. դրամով:

Վայոց ձորի մարզում 2016 թվականին 18 համայնքներում իրականացվել է համայնքների խոշորացման ծրագիր: Ձևավորվել են Վայքի, Ջերմուկի, Զառիթափի խոշորացված համայնքները: Նախատեսվում է ընթացիկ տարում ևս 24 համայնքներում իրականացնել համայնքների խոշորացում՝ Արենի, Շատին, Գլաձոր խոշորացվող համայնքներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ